

Եղ որին եմ ու.
դուք ճիշդին էք,
ան որ իմ վրաս հա-
տատուած է՝ եւ ես անոր
վրայ, անիկա շատ պատու
կը բերէ, վասնզի ա-
ռանց ինծի բան մը
չէք կրնար ընել:
Յովթ. ԺԵ. 5

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵԿՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Ամէն բանի կը
զիջանի, ամէն բա-
նի կը հաւատայ, ամէն բա-
նի կը յուսայ, ամէն բա-
նի կը համբերէ: Սէրը
բնաւ չի յնար:
Ա. Կորնթ. ԺԳ. 71

“PANPÈRE” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
Բաժնեգին տարեկան.— Ֆրանսա եւ Սուրիա 5 ֆր. Արտասահման 1,50 շիլ. կամ 40 ամերկ. Սէնթ
RÉDACTEUR H. N. GHAZAROSSIAN, 29, Rue Fauchier — MARSEILLE (France)

Թիի 1-2

Դ. ՏՎՐԻ

ՅՈՒՆՈՒՍ. ՓԵՏՐՈՒՍ. 1928

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուրախութեամբ կը թեւակոխենք նաեւ Գ.
տարին: Ուրախութեամբ կ'ըսենք, որովհետեւ
անցեալ երեք տարիները, որոնք այսքան շուտով
գլուցեցան գացին, մեր մտքին մէջ բաւական
տակներ թողուցած են:

Երբ այս պարբերականը սկսանք ու տեսանք
Թէ Տէրը հաստատեց մեր ձեռնարկին հասկի
ըլլալը, այլեւս մոռցանք մեր վրայ ճշող ծան.
բաժանը լուծը եւ մխիթարութիւն փնտռելինք
ուրիշներու օգտակար ըլլալուն մէջ:

Ուրախ ենք ըսելու Թէ պարբերականս գացած
տեղերուն մէջ իր ընթերցողները ընդհանրապէս
գոհ թողուցած է: Մեր փնտռածը նիւթական
շահ չէ, այլ հոգեւոր:

Այս ամսամերթը սկսելու ժամանակ մեր
նպատակը եղած էր նախապէս Ֆրանսայի մէջ
ցրուած եւ անհովիւ հայութեան մասերը բա-
կարի հոգեւոր մէկ շունչի տակ բերել: Յետոյ
տեսանք Թէ արտասահմանի մեր ազգակիցներն
սլ կը հետաքրքրուին անով, ուստի որպէսզի
կարենանք անոնց ալ գոհացում տալ, ստիպուե-
ցանք Թերթս ընդարձակել ու ղրկել փափաքուած
տեղերը: Այս պարագան պատճառ եղաւ որ մեր
Թղթակցութիւնն ալ ընդարձակի ու մենք յարա-
բերութեան մէջ մասնա Ֆրանսայի եւ պատ-
սահմանի մէջ զմեզ շրջապատող «Բանբեր»ի
ընտանիքին հոծ բազմութեան հետ:

Թէ դէպի ո՛ր կը յառաջանան մեր քայլերը,
ցարդ յայտնի եղած ըլլալու է մեր ընթերցողնե-
րուն, այսուամենայնիւ չենք ուզեր անգամ մըն
ալ չանդրադառնալ սոյն կէտին, աւելի որոշ
ընելու զայն աշխարհի, Թէ

(ա). մեր նպատակն է քարոզել խաչեալ
քրիստոսը եւ Անոր միջոցաւ փրկութիւն ընդու-

նելու եւ կատարելապէս խաղաղութեան հասնե-
լու կարելիութիւնը:

(Բ). Հոգեւոր բաներու փափաք ունեցողները
աւելի արթուն պահել եւ զանոնք սնուցանել առ-
ի փրկութիւն եւ քրիստոսի համարձակ ու քաջ
վկանք ըլլալու:

(Գ). Հաւատացեալները հոգեւոր կեանքի մէջ
աւելի հաստատել ու խորունկցնել: Հաւատքի
կեանքը ճանչցնել ու անոր մէջ քաղելու համար
ճամբաներ ցոյց տալ:

Եւ վերջապէս Հայը արթնցնել եւ իր բարձ-
րագոյն կոչումը վերջիշել տալ իրեն:

Մեր անձնական համոզումն է եւ գիտենք որ
շատերն ալ մեզի գաղափարակից են Թէ «Հայը
արեւելքի մէջ Աւետարանի Բաժիրայ եղած է
եւ ունի կարելիութիւններ նաեւ Եւրոպայի եւ
Ամերիկայի մէջ ալ նոյն դերը կատարելու, ըլլայ
այն ներկայիս անուղղակի կերպով, ապա յառա-
ջիկային ուղղակի գործունէութիւն ցոյց տալու,
որուն համար Տէրը զմեզ այս լուռ տարիներու
ընթացքին կը կրթէ եւ կը նախապատրաստէ:

Արդ մենք այս համեստ պարբերականով միշտ
պիտի կրկնենք Թէ Հայը չէ քաղաքական ազգ-
մը, հապա աւետարանիչ ազգ մը, եւ բոլոր անոնք
որ կը զգան Թէ այս կոչումին կանչուած են,
անոնք միանալով զօրաւոր ճակատ մը բռնելու
են, զիրար քաջալերելու եւ գործի մղելու են:

«Բանբեր»ը այս կարեւոր գործին համար
փոքր սատարող մը, գրգռիչ ոյժ մըն է եւ այս-
պէս պիտի մնայ, առանց երբեք իր ուղղութիւնը
փոխելու:

Անցեալ տարուան մեր խոստման համաձայն
կարգ մը դժուարութիւններ հարծելու պայմա-
նաւ, ահա Գ. տարին կը սկսինք ճշունեւոր ամի-

սով : Ասկէ յետոյ ամսէ ամիս «Բանբեր»ը պիտի գայ քեզի, յիշելու թէ քրիստոս սիրեց զքեզ եւ մեռաւ քեզի համար եւ ապա քեզ մտաբերելու թէ դուք եւս պարտական էք քեր եղբայրը սիրել : Ա. Յովհ. Գ. 16 :

Անցեալ տարուան շրջանին մեզի բազմաթիւ դիմումներ եղան թէ Յունաստանէն եւ թէ Սուրիայէն, որպէսզի ձրի «Բանբեր» ղրկենք. իրենց հակառակ մեր արդէն ղրկած ձրի թերթերուն դեռ չենք կրնար ամենուն ալ գոհացում տալ, այս պատճառաւ որոշած ենք սոյն թուէն սկսեալ այդ նպատակին համար նուիրատուութեան ցանկ մը բանալ :

Արդ, որոնք որ կը փափաքին իրենց կողմէն նուէրներ ղրկել, այդ տեղերուն մէջ տառապող մեր եղբայրներուն եւ բոյրերուն եւ չեն գիտեր տեսնու անոնց, թող գրեն մեզ ու գրեն ղրկուելու լիք թերթերուն քանակը եւ մենք պատրաստ ենք իրենց նուէրները յղել պատկանեալ տեղերը իրենց անունով :

Այս առթիւ մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք բոլոր անոնց, որ մեզի քիչով թէ շատով նիւթապէս, մանաւանդ բարոյապէս օժանդակեցին : Շնորհակալ ենք նաեւ բոլոր այն գնահատականներուն համար, զորս անցեալ տարուան ընթացքին ընդունած ենք : Շնորհակալ ենք մեր բոլոր աշխատակիցներէն, որոնք մեր ջանքերը գործնականապէս գնահատեցին մեր վրայ ճշդով բեռէն մաս մըն ալ իրենք վերցնելով :

Ձեր անդամներուն յարաժամ կարօտ ենք, այս պատճառաւ պիտի խնդրէինք որ անձանթի մեզի հետ պատերազմակից լինիք աղօթքով :

Տէրոջը շնորհքը քեզի հետ ըլլայ : Ամէն :

«Բանբեր»ի խմբագրական մարմին

Ժ. Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ԿԱՄՔԸ ԿԱՏԱՐԵԼ

Ան որ Աստուծոյ կամքը կը կատարէ
յուշտեան կը մտայ. Ա. Յովհ. Բ. 17

Չանազան կերպեր կան Աստուծոյ կամքը կատարելու. ամբողջ տիեզերքը Աստուծոյ կամքը կ'ընէ, ինչպէս որ տիեզերքին իւրաքանչիւր մասը ամենաբարձր աստղէն մինչեւ ամենափոքր որդը կը շարժին անգիտակցաբար Աստուածային կանոններուն համաձայն :

Որմնագիրը որ գաճը կը շաղէ տան հրապարակին մէկ անկիւնին փոքր փոսին մէջ, ճարտարապետին կամքը կը կատարէ, բայց եւ այնպէս գործի ծրագրի մասին ո եւ է տեղեկու-

թիւն չունի. այդ արհեստաւորին եւ ճարտարապետին միջեւ խորհուրդի կամ նպատակի համաձայնութիւն ալ չկայ : Այսպիսի հնազանդութիւն մը կ'ըլլի, անգիտակ եւ կրաւորական հնազանդութիւն մըն է, որ կարող չէ մեր բուն բնաբանը պատկերացնել :

Ա. Մենք Աստուծոյ կամքը կատարելու համար ի՞նչպէս կանչուած ենք.— Ոչ այն գերի ծառային պէս որ ակամայ իր տէրոջը կամքին հնազանդելու ստիպուած է, այլ մանաւանդ հարազատ զաւկի մը պէս, որ իր հօրը ծրագիրներուն գիտակցաբար միացած է եւ անոր շահերը իրենին պէս կը փնտռէ : Այս հպատակութիւնը հօրը կամքին հանդէպ ոչ թէ վախէ յառաջ կուգայ, այլ արդիւնք է որդիական սիրոյ :

Օրէնքի տակ եղող մարդուն համար Աստուծոյ կամքը կատարել ծանր ստիպում մը եւ անհաճոյ լուծ մըն է, որովհետեւ ան կը սիրէ մեղքը, զոր Աստուած կ'ատէ. այսպէս Աստուծոյ կամքը իր անձնական կամքին բոլորովին հակառակ է : Իր խօսքն է Բ. Սաղմոս. Տրդ համարը. «Կոտորենք անոնց կապերը ու մեզմէ ձգենք անոնց լուծը» : Բայց Աստուծոյ զաւկին համար, որ Բրիստոսի մահուամբ ազատեցաւ մարմնին ու մտքին ուղածէն, հաճութեան աղբիւր մըն է իր երկնաւոր հօրը կամքը կատարել : Ամէն օր աւելի փորձառու կ'ըլլայ այն զաւանթիքին թէ Աստուծոյ կամքը «Բարի ու հաճելի եւ կատարեալ է» :

Աստուծոյ կամքը ընել ի՞նչ ըսել է : Ոչ թէ միայն կրօնական բաներով զբաղուել, ինչ որ ընդհանրապէս Աստուծոյ գործ կը նկատուի, այլ մանաւանդ սովորական կեանքի մէջ ամէն պարագայի տակ, ինչ վիճակի մէջ ալ գտնուինք, անոր գերիշխանութեան լուծին ենթարկել մեր թէ ներքին եւ թէ արտաքին կեանքին բոլոր երեւոյթները : Այսինքն թոյլատրել որ Ան մեր զբաղումներն ու ժամանակները, մեր խօսակցութիւնները, շարժումները, փափաքները եւ բարոյական յարաբերութիւնները, մեր սրտին ամենածածուկ խորհուրդները քննէ եւ անոնց վրայ տիրապետէ, այն ատեն կարող կ'ըլլանք ասենապատիկ, աննշան պարտականութիւնները իր փառաց համար կատարել :

Բ. Ի՞նչ է Աստուծոյ կամքը մեզի համար.— Աստուծոյ կամքը մեր սրբութիւնն է (Ա. Թես. Դ. 5) :

Երբ. Ժ. 10ին մէջ կ'ըսէ. «Որ ան կամքովը մենք սրբուեցանք» : (Սրբութիւնը իբր կատարուած իրողութիւն մը կը նկատուի,

այսինքն Յիսուս Քրիստոսի քաւարար մահուամբ մենք զատուեցանք Աստուծոյ սէպհական ժողովուրդը ըլլալու) :

Առաջին համարին (Ա. Թես. Դ. 5) մէջ խնդիրը Աստուծոյ խորհուրդին բարձրագոյն նպատակակէտն է, որու ինք կ'առաջնորդէ իւրաքանչիւր ծախու առնուած, եւ կ'ուզէ որ մենք իր որդւոյն պատկերին կերպարանափոխուինք Սուրբ Ըլլալու մեզ կանչողին նման :

Երբ մենք այս հիմնական խորհուրդը միշտ մեր աչքերուն առջեւ ունենանք, պիտի հասկընանք Աստուծոյ գործելակերպին եւ զատաստաններուն խորունկ նշանակութիւնը եւ պիտի սորվինք սիրել Անոր կամքը, ըլլայ թէ մեզ հարստացնէ կամ սնանկացնէ, մեզ խոտաւէտ արօտներու կամ անջուր անապատներու մէջէն առաջնորդէ :

Աստուծոյ կամքը մեր վրայ կրկին գործողութիւններ կը կատարէ :

1. Ժխտական գործողութիւն մը : Այսինքն մեզ կ'ազատէ մեր մարմնաւոր կամքէն որ միշտ Սատանային միջոցաւ գրգռուած է Աստուծոյ դէմ :

2. Դրական գործողութիւն մը : Այսինքն զմեզ Աստուածային կամքին եւ խորհուրդներուն կը հպատակեցնէ : Ինչ չափով որ ես կեանքի շրջանակին մէջ գործող հին անձնական կամքէս ազատուիմ, նոյն չափով կրնամ Աստուծոյ կամքը իւրացնել եւ Քրիստոս Յիսուսով նոր ստեղծումի միջավայրին մէջ ապրիլ :

Յիսուսի համար — իբրեւ կատարեալ մարդ — իր հօրը կամքը կենաց աղբիւր մը եւ իր հոգիին սնունդն էր. (Յովհ. Դ. 54) Անոր մէջ ո եւ է ատեն ամենափոքր ընդդիմութիւն տեղի չունեցաւ Աստուծոյ կամքին հակառակ, ինչու որ անոր կամքը իրեն համար անընդհատ հաճութեան աղբիւր մըն էր : (Սաղմ. Խ. 8) Մինչդեռ ասիկա ամենանուիրուած քրիստոնեային համար երբեմն պայքարներու եւ սրտցաւերու գուռ կը բանայ : Ան որ խորունկ կերպով փշրուեցաւ եւ թող տուաւ որ Աստուծոյ յաղթական կամքը գերի բռնէ եւ առաջնորդէ զինքը, (ինչպէս յաղթական իշխան մը իր զերինները իրեն ետեւէն քալեցնելով կը տանի) կրնայ վկայել այն փառաւորեալ եւ անպատմելի խնդութեանը մասին, որ ասանկ հպատակութեան մը արդիւնքն է :

Հաւատքի հնազանդութեան մէջն է որ Աստուծոյ զաւակը կ'աճի Անոր ճամբաներուն

եւ խորհուրդներուն գիտակցութեան սէջ : Այն ատեն Աստուծոյ խօսքը բաց գիրք մը կ'ըլլայ, Եհովային գաղտնիքները կը յայտնուին անոր : Այս կեանքը լոյսի մէջ գնացք մըն է, աստուածային ներդաշնակութիւնը, խաղաղութիւնն ու անվրդով գոհունակութիւնը վայելող :

Բայց դեռ աւելին կայ : Աստուծոյ կամքը կատարել բսել է ուղղակի Անոր անձին հետ սերտ յարաբերութիւն ունենալ, ինչպէս որ Տէր Յիսուս ըսաւ իր աշակերտներուն, «Վասնզի ով որ իմ երկնաւոր Հօրս կամքը կը կատարէ, անիկա է իմ եղբայրս ու քոյրս ու մայրս» (Մատթ. ԺԲ. 30) : Կ'եզրակացնենք թէ Աստուծոյ ընտանիքէն հաշուուիլը (Եփես. Գ. 11) ոչ թէ հնազանդութեան վարձքն է, այլ աստուածային կամքին հնազանդութիւնը վերստին ծննդեան արդիւնքն է : Ոչ թէ որովհետեւ կը հնազանդիմ՝ Աստուծոյ զաւակ կ'ըլլամ, այլ որովհետեւ որդեգրուած եմ, ատոր համար իմ Հօրս կամքին կը հնազանդիմ :

Յիսուս Քրիստոսի հետ իբրեւ մէկ հոգի կապուած ըլլալու համար մասնակից կ'ըլլամ անոր կատարեալ հնազանդութեան որ եկաւ «Ոչ թէ իր կամքը կատարելու, հապա զինք ղրկողինը» :

Գ. Աստուած ի՞նչպէս կը յայտնէ մեզի Իր կամքը. — Իր խօսքովը : Յիսուս կը հաստատէ թէ Իր վարդապետութեան գիտակից ըլլալուն էական պայմանն է սրտին ուղղութիւնը առ Աստուած հնազանդութիւնով : (Յովհ. Է. 17), Ան որ կ'ուզէ հնազանդիլ... պիտի գիտնայ... Սկզբունք մը, որ աշխարհային իմաստութեան բոլորովին հակառակ է, որու կերպն է ամէն բան ճանչնալ ու քննել, հնազանդելէ առաջ : Արդ այս աստուածային գիտակցութիւնը որ Քրիստոս Յիսուսով յայտնուեցաւ, սրտի խորունկ գիտակցութիւն մըն է, որ Անոր կամքին հնազանդութենէն կը բղխի. (Յովհ. ԺԷ. 2) :

Ի՞նչպէս կրնանք այս «Յաւիտեան կը մնայ» յայտարարութեան բացարձակ նշանակութիւնը ըմբռնել : Ինչ որ յաւիտենական է, որոշ է թէ անսկիզբ, անվախճան եւ ինքնագոյ է : Յաւիտենական կեանքը անստեղծ բուն աստուածային կեանքի էութիւնն է : Ինչ որ անմահ է, ան է որ չմեռնիր, որ վախճան չունի, բայց սկիզբ մը, ստեղծուած մը կ'ենթադրէ : Մարդը անմահ է քանի որ իր էութեան հոգեկան մասը չկրնար մեռնիլ, բայց ինք յաւիտենական չէ, մի միայն Աստուած

յաւիտենական է, միմիայն Ան է ինքնագոյ,
անսկիզբ ու անվախճան :

Հաւատացեալը ի՞նչպէս կը ստանայ այս
յաւիտենական կեանքը : Երբ վերստին
ծննդեան փորձառութիւնով (Ա. Պետ. ա. 4 ի
համաձայն) հաւատքով կ'իւրացնէ այն «մեծ
եւ պատուական խոստումները», որոնց միջո-
ցաւ մասնակից կ'ըլլայ աստուածային բնու-
թեան. այն ատեն Սուրբ Հոգին վկայութիւն
կուտայ իր Հոգիին հետ թէ ինք Աստուծոյ
որդի մը եղած է : Միեւնոյն ժամանակ իրեն
համար Նոր կեանքը կը սկսի, բայց եւ այնպէս
Աստուծոյ ծրագրով՝ (որուն աչքերուն առջեւ
հազար տարին մէկ օրուան պէս է) այս անձ-
նաւորութիւնը հաշուերուած է իր ընտրեալնե-
րուն մէջ, իր անունը աշխարհի սկիզբէն ի վեր
Փառնուկին կենաց գրքին մէջ գրուած է :

Այն պահուն որ մեղաւորը կ'ապաշխարէ,
գիտակից կ'ըլլայ շնորհաց այն սքանչելի գան-
ձերուն, որոնք սկիզբէն ի վեր իրն էին Քրիս-
տոսով : Ճիշդ այնպէս, ինչպէս որ փոքր ճիւղ
մը պատուաստուած է այն ծառին վրայ, որ
խորունկ արմատներ ունի, տկար ճիւղը բոլո-
րովին միացած ըլլալով զօրաւոր ծառին հետ,
անոր էութիւնը կ'ունենայ եւ հաստատուած
ըլլալով՝ անոր կենսատու հիւթէն կը սնանի
ու կ'ապրի : Ինչպէս որ պղտիկ մանուկի մը
համար, որ աղնուղարմ ընտանիքէ կը սերի,
իր ծնած օրէն սկսեալ շահակից կ'ըլլայ այն
ամբողջ հարստութեան, գիտութեան եւ առա-
քինութեան, զոր իր նախահայրերը զիգեցին,
այն տոհմային անունը զոր իր ծնունդէն ի վեր
կը կրէ, ապացոյց է թէ ինքը իր ընտանիքին
պատիւին ու փառքին մասնակից է, թէպէտ եւ
տակաւին անգիտակից է անոր. ճիշդ նոյնպէս
ալ Քրիստոսի մարմնին իւրաքանչիւր նոր
անդամը ամբողջ մարմնին կեանքին եւ փառ-
քին մասնակից կ'ըլլայ :

Քրիստոնէական փորձառութիւնը այս ժա-
մանակաւոր կեանքին մէջ արդիւնքն է նախա-
դարեան քրիստոնեայ սերունդներուն զիգած
գիտութիւններուն եւ փորձառութիւններուն,
որոնք իրենց կեանքը մեր գլուխը եղող Քրիս-
տոս Յիսուսով ապրած են : Անոր համար
կրնանք հաւատքի կատարեալ վստահութիւ-
նով ապաւինիլ մեր բնաբանին վաւերականու-
թեան : «Ան որ Աստուծոյ կամքը կատարէ
յաւիտեան կը մնայ» :

Անցեալ յաւիտենականութեան մասին
փոքր զաղափար մը կազմելէ յետոյ պիտի

փափաքէի որ լմնցնելէ առաջ ապագայ յա-
ւիտենականութեան վրայ ալ ակնարկ մը նե-
տենք :

Հասկցանք թէ արդէն երկրի վրայ Աստու-
ծոյ կամքը կատարելը մեղի կեանք կուտայ,
ասիկա երջանիկ եւ բարի պատուհներով լեցուն
կանոնաւոր քրիստոնէական կեանք մը ապրե-
լու միակ պայմանն է :

Եւկենից թագաւորութեան որդիներուն
ազօթքն է «Բու կամքդ ըլլայ ինչպէս որ եր-
կինքը, անանկ ալ երկրիս վրայ» :

Ի՞նչ բան երկինքը փառապանծ կ'ընէ եւ
ի՞նչ է որ հաւատացեալին աչքերուն անսահ-
ման հաճոյք կուտայ : Այս է միայն որ հոն
Աստուած կը տիրէ : Հոն իր տիրապե-
տութիւնը անժխտելի է : Երկինքի մէջ Աստու-
ծոյ կամքը լիովին ի գործ կը դրուի. չկայ մէկ
արարած մը որ Անոր իշխանութիւնը չհաւնի :
Բոլոր հրեշտակաց զօրքերը ծախու առնուած-
ներուն հետ իր թագաւորական աթոռին առջեւ
կը ծռին եւ կատարելապէս կը հնազանդին
իրեն : Ուր որ Աստուծոյ միապետութիւնը կ'ըն-
դունուի, հոն է կեանքը եւ պտղաբերութիւնը :
Աստուծոյ եւ Փառնուկին աթոռէն է որ կը
բղխի այն կենաց ջուրին գետը որ Աստուծոյ
քաղաքը, այսինքն Նոր Երուսաղէմը կ'ուրախա-
ցնէ եւ կենաց ծառը կը սնուցանէ. որուն տե-
րեւները հեթանոսներուն բժշկութիւն կ'ըլլայ :

Այդ երկինքի մէջ տիրող հիանալի ներ-
դաշնակութեան պատճառը այս է՝ որ հոն
Աստուած է միմիայն Տէրը, ամէն բան
Անոր օրէնքի գերիշխանութեան տակ կատար-
եալ կը լինի :

Եթէ մարդիկ երկրի վրայ Աստուծոյ կամքը
կատարէին այնպէս, ինչպէս որ երկինքի մէջ
կը կատարուի, այն ատեն երկիրը երկինքի
պիտի փոխուէր : Փառք Աստուծոյ որ մենք ի-
րաւունք ունինք անխախտ հաւատքով իր խոս-
տումներուն համաձայն միշտ այս բանին սպա-
սել, ինչպէս որ Յակոբ իր որդւոյն Յուդայի
համար մարգարէական օրհնութեան ատեն
կ'ըսէ. (Ծննդ. ԽԲ. 10) «Ու ժողովուրդները
անոր պիտի հնազանդին» :

Դէպի հնազանդութեան վերադարձ՝ պիտի
ըլլայ զարձը կանոնաւոր կեանքին, այն «Ամէն
բաներուն կարգադրութիւնը» որու նկատմամբ

Պետրոս առաքելալ (Գործ. Գ. 21) ի մէջ կը խօսի: Ինչպէս որ մարմնոյ եւ մեղքի կամքին կատարումը մահ եւ աւերում կը գործէ, այնպէս ալ Աստուծոյ օրէնքին հպատակութենէն կը ծնի կեանք մը. որ մահուան կը յաղթէ:

Երբ այս փառաւոր ապագային մասին մտածենք զոր մեր առջեւ ունինք, մեր սրտերը շնորհակալութեամբ եւ ցնծութեամբ յորդելու չեն: Երեւակայենք աշխարհ մը որ սատանային եւ մարդոց մեղքէն ու անիրաւութենէն բոլորովին մաքրուած է ու Աստուծոյ ժողովուրդը վերջապէս մեղանշական մարմնէն եւ սահմանաւոր կեանքէն ազատուած՝ յաւիտեանալան անպատմելի ուրախութիւնով Անոր երեսին առջեւ կը քալէ եւ Անոր կամքը կատարելապէս կը գործադրէ:

Բայց եւ այնպէս արդէն հոս, երկրի վրայ՝ մենք կանչուած ենք այս երկնաւոր երջանկութեան համը առնելու ու վայելելու, հաւատքի եւ հնազանդութեան կեանքով մեր փրկիչ Աստուծոյ կամքին համաձայն:

Արդեօք սեր թշուառութեանց ամենամեծ մասը ասոր արդիւնքը չէ՞ որ տակաւին մեր կամքը ռեւէ տեսակէտով Աստուծոյ կամքին հակառակ է: Կը խնդրենք, բայց չենք առներ՝ ոչովհետեւ սեր աղօթքները Աստուծոյ կամքին համաձայն չեն:

Վերջապէս սիրելիներ, չենք ուզեր այսպիսի կեանք մը ապրելու համար ճիշդ այսօր մեր մէջ եղած հակառակութիւնները մէկդի ձգել եւ թոյլ տալ որ Յիսուս տիրապետէ մեր սրտերուն մէջ, մընչեւ որ իր բոլոր թշնամիները ոտից կոխան ընէ:

Եթէ հոս աշխարհի վրայ այդ գետի նման խաղաղութիւնը եւ Աստուծոյ ժողովուրդին խոստացուած տեւական հանգիստը վայելել կ'ուզենք, Անոր մօտենանք կոտրած եւ խոնարհ սրտով եւ վստահութեամբ ըսենք Յիսուսին՝ ման, «Ահա կ'ուզամ ես ով Աստուած քու կամքը ընելու»: Ամէն:

Ք. Վ.

ՏԱՌԱՊԱՆՔԻՆ ՊԱՇՏՈՆԸ

(James H. Mc. Conkey)

Քու ցուպդ ու գաւաղանդ, անոնք զիս պիտի միխիմարեն: Սաղմ. ԻԳ. 4

Օ՛յ, սա շունձորոտ մեայլ ու մութ ամպերուն ետեւ Յորդաւառ լոյսի հրէկհումներ կան, Արեւ. կայ արեւ... Ու ներքնաստարած արտառն ամպերուն հնայքով օծուն, Գարձեր է լոյսէ ժպիտով հիւսուած քեցիկ բոցբոցուն: Օ՛յ, ես ալ կ'ուզեմ կեանքիս անջրպետ ամպրոպը խոժոռ նրջել, Թող անոր լոյսերով վառուած արտառը աղւոր Ռիշներն վայլեն, ես գիտեմ ներսս մաղող ցաւազին Տարափը շանձի պիտի դառնայ լուսեղ գոյարներ անգին: Ս. Պ.

Ահա մեծ Յշմարտութիւն մը ոչ Թէ միայն բնական, այլ նաեւ հոգեւոր աշխարհին մէջ: Երկնից ամպերը որքան մութ որ ալ ըլլան, մեզի անտեսանելի կողմը, ներսը, միշտ փայլուն եւ լուսաշող է: Աստուծային հայեցակէտին մէջ մութ ամպեր գոյութիւն չունին, վառելի ամպերու արեւադարձ կողմը միշտ լուսավառ հրախառում մըն է: Միայն աշխարհն է որ մութը կը տեսնէ: Այսպէս ալ է Սնդմաներգութիւն խօսքերը «Քու ցուպդ ու գաւաղանդ, անոնք զիս պիտի միխիմարեն»:

Հոս դիտելն է տեսնել հանգստութիւն մը, վառելի ցուպ եւ գաւաղան աստուծային հոգածութեան եւ պաշապանութեան խորհրդանշան են: Սակայն այս համարին մէջ դատարարական եւ տառապանքի գաղափար մ'ալ կայ:

Ուրեմն ի՞նչպէս «հանգստութիւն» կ'ընայ ըլլալ: Աստուած կարող է, տառապանքէն օրհնութիւն արտաբերել:

Մարդկօրէն կարելի՞ է բմունել Թէ վշտաբեր եւ տառապալից երեւոյթներ աստուծային հայեցակէտով, փառաւոր արդիւնք պիտի ունենան: Աստուած կարող է մեղքին ազդեցութեան տակ ընկճուող այս աշխարհիս մէջ տիրող վիշտերն ու խոցերը վառաւորել այնպէս ոչ «Ամէն բաները բարիի գործակից ըլլան անոնց, որոնք զԱստուած կը սիրեն»:

— Վստահարար կ'ըսենք, նա կարող է:

Ան չի զրկեց տառապանքը: Ի՞նչ կ'ըսէ իր խօսքը «Վառելի ինչպէս մարդէ մը մեղքը աշխարհ մտաւ եւ այն մեղքէն մահը...» Մահը իր բոլոր հետեւորդներով ցաւերով եւ տառապանքներով հետեւեցաւ մեղքին հետքերուն: «Թշնամի մարդ մը ըրած է ասիկա» բայց Աստուած կարող է եւ կը կառավարէ տառապանքը, զայն երկրի վրայ տարող իր սուրբերուն զաման, սրբացման եւ կոտորելութեան համար:

Թէ ի՞նչպէս կ'ընէ այս, եւ իր գաւաղներուն համար տառապանքի եւ ցաւոց հրաշէկ հնոցէն ի՞նչ յառաջ կը բերէ:

Կը ստատախոսենք Թէ նախ.—

ՏԱՌԱՊԱՆՔԸ ԱՍՏՈՒԾՈՅ ՓՈՐՁԱՍՐՈՇՆ Է

Անգամ մը պողպատի գործարանի մը փորձարանը այցելելու պահուստ, տեսայ թէ արախին շուրս կողմերը բազմաթիւ խորշերու, բաժնուած յարկադարաններ կային : Իւրաքանչիւր խորշի մէջ պողպատի կտոր մը կար որուն վրայի արձանագրութիւնն էր իր բեկանման, դիմացկունութեան, առաձգականութեան եւ այլ յատկութիւններու մասին : Այսպէս ոմանք կտորուած էին եւ այդ կը նշանակէր թէ դիւրարեկ յատկութիւն ունին, ուրիշներ որոնք ըսել է այդ կտորները առաձգական են : Կային պողպատի կտորներ, որոնք ձգողական յատկանիշն ունէին, ոմանք ալ ճնշումի ենթարկուելով իրենց դիմացկուն եւ տոկուն յատկութիւնն ցոյց տուած էին : Այս գործողութիւններէն յետոյ գործարանատէրը վստահարար գիտէր թէ իր պողպատէ ապրանքները ի՞նչ աստիճանի տոկունութիւն ունէին, գիտէր նաեւ թէ անոնք ինչպէս պիտի դիմանային հսկայ նաւուն, մեծակառոյց շէնքին եւ կամուրջին շինութեան մէջ : Այս գիտակցութիւնը ունէր իր նախնական փորձերով եւ փորձարանի արձանագրութիւններով :

Յաճախ միեւնոյնն է Աստուծոյ զաւակներուն համար : Աստուած չուզէր որ իր զաւակները ապակեայ անոթներու նմանին, որոնք դժուարութեան եւ փորձութեան առաջին հարձակումը անմիջապէս փշրուին : Ընդհակառակը Ան կ'ուզէ զմեզ տեսնել պողպատի այն հատատուն կտորներուն նման, որոնք կարող են կրել ու դիմանալ ձգողութեան առաձգականութեան, ճնշման եւ դիմացկունութեան ծայրագոյն աստիճանի փորձերու ատեն : Չուզէր որ ըլլանք ջերոցի բոյսեր այլ հողմահար յաղթ կազմիներ, ոչ թէ առաջընթաց, որոնք կը փլչին ու կը քշուին հովին հոսանքներէն իսկ, այլ կրանիքեայ ապաւաճներ, կարող դիմադրելու նոյնիսկ յորդառատ անձրեւներու եւ զարհուրելի փոթորիկներու :

Տէրը զմեզ այս աստիճանին հասցնելու համար իր տառապանագ փորձարանը կը տանի : Հոն է որ նա կը փորձէ մեր յատկութիւնները, մինչեւ իր ուզածին չափ զարգանանք եւ հաստատուինք :

Սբ. Հոգին մեր սիրելի փրկչին համար կ'ըսէ «Թէպէտ ինք որդի է, բայց իմ ջարդարանքներէն հնազանդութիւն սորվեցաւ» : Ուստի Յիսուս ինք անձամբ աշակիս փորձի շրջանէ մը անցաւ, որքա՛ն աւելի պէտք ունինք մենք Աստուծոյ տկար զաւակներս սորվելու, մեր մեծ Ուսուցչապետին սուսած դասերը :

Մեզմէ շատերը անձնական փորձառութենէ տարբեր բանի պէտք չունին հաստատելու թէ արդարեւ տառապանքը Աստուծոյ փորձարանն է :

Տառապանքի միջոցաւ կը սորվինք

ԱՍՏՈՒԾՄԷ ԿԱԽՈՒՄ ՈՒՆԵՆԱԼ

Աշխարհի ամէնէն նշանաւոր գեղարուեստի Թանգարաններէն մէկուն մէջ Հէլէն քանդակագործութեան գլուխ գործոց մը կայ, «Թեւաւոր Յաղմանակը» խորհրդանշանով : Զմայլելի տաղանդի գործ : Քանդակը կը ներկայացնէ կին մը վէս եւ հրաշակիր : Քննադատներ կը կարծեն թէ նա Հէլէն ցեղանաւի մը յառաջակողմը կը զարդարէ եղեր : Այս արձանին մէջ շարժման

տպագործութիւնը շատ աչքատու է : Կինը Թեթեօրէն առաջ հակած է, իրր թէ ուզեր սուրացող ցեղանաւէն առաջ հասնիլ մրցանակին : Տաղանդաւոր քանդակագործը մութքի մի քանի ծարուածներով կերտած է ծիռն հանդերձներ, որոնց վէտվետուն ծալքերուն պատկերացուցած երեւոյթը նկարագրել դիւրին գործ չէ : Յիւսի այս գլուխ գործոցին մէջ յառաջադրացումի եւ խոյանքի պատկերացումը մեծ յաջողութեամբ նկարուած է :

Մինչ ցեղանաւը իր եռանդուն յաղթութեան աստուածութիւնն առաջնորդուած կը սուրայ դէպի աներեւոյթ ծշնամբն : այս երեւոյթը դիտողը անանկ կը զգայ թէ կը տեսնէ յառաջացող նաւը, կը լսէ Թիւսկարներու երգը, կարծես հովը կը փայփայէ իր դէմքը : Սակայն, այս զօրութեան եւ գեղեցկութեան ու յաղթութեան խորհրդանշանը գլուխ չունի, զուրկ է Թեթեօրէն ու իր մարմինն ու անդամները ջախջախուած են : Արատաւոր եւ խեղանդամ է, բայց տակաւին Յաղմութեան մը զմայլելի Թարգմանն է :

Ահ, ի՞նչ մեծ Տշմարտութիւն եւ սորվելիք դաս մը կայ հոս : «Ասիկա է յաղթութիւնը որ աշխարհի կը յաղթէ, այսինքն մեր հաւատքը», հաւատք ըսել է Աստուծոյ կախում ունենալ : Իսկ Աստուծոյ կախում ունենալը կը սկսի այն ատեն երբ «ես»-ն կախում ունենալը դադարի : Մեզմէ շատերուն մէջ անձնավստահութիւնը վերջ կը գտնէ երբ վիշտ, տառապանք, խորտակուած յոյսեր եւ ծրագիրներ, ցաւոց հովտին մէջէն մեզ հասցնեն հոն ուր մենք իրեն տկար, պարտուած, անկարող եւ ընկճուած անհասներ ինքզինքնիս Աստուծոյ առջեւ կը ձգենք : Յայնժամ կը սթափինք եւ կը հասկնանք թէ սորված ենք հաւատքի դասը : Կը տեսնենք մեր հաւատոյ ազգայն կեանքը որ կը խուժէ դէպի օրհնեալ յաղթական կեանք եւ դէպի իջող գործունէութիւն, որը երբեք երսդկ չընք կարծիք, մարմնի եւ անձի վստահութեան օրերուն :

Ահա յաղթական կեանքը, զոր աշխարհ խորտակուած կեանք մը պիտի կոչէ : Իրականապէս խորտակում, փշրում է, բայց Աստուծոյ զօրութիւնը եւ քաջութիւնը գտնելու համար անձնական ոյժերու խորտակում է միայն : Իսկ մէջ աղքատացած՝ Աստուծոյ զօրութիւնը գտնելու համար, աշխարհային հաճոյքներէն ու զուարճութիւններէն զրկուած՝ Բրիտանիայի յափտեանական ուրախութիւնը վայելելու վստահութիւնով :

Տառապանքի միջոցաւ

ԱՍՏՈՒԾՈՅ ԾԱՌԱՍՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ ԿԸ ՄՏՆԵՆՔ

Ամերիկայի հարաւի մասերուն մէջ զօրավար Ջ. Պ. Կորալնի յիշատակը շատ յարգելի է : Իր մասին հետեւեալը կը պատմուի :

Քաղաքային պատերազմներէն վերջ Կորալնի Միացեալ Նահանգաց ծերակոյտին Թեկնածուն ճանչցուած էր : Ընտրութեան օրը հասաւ քուէատուններու ցանկին մէջ մարդ մը կար որ պատերազմի միջոցին Կորալնի գունդէն եղած էր : Այն ատեն սեւե պատճառաւ գտնուած էին իրարմէ եւ մարդը մտադրած էր իր զօրավարին հակառակ քուէարկել : Իր կարգը եկածին պէս ոտք ելաւ հակառակ քուէ տալու անոր, որու հետ կողք կողքի

կուռած էր պատերազմի ջորս տարուան ընծացքին : Այս պահան զորավարը բեմին վրայ նստած էր, եւ քանի որ գինարը ուր կ'եղէր կորալնի դէմքին վրայ սպի մը նշանակեց, որը կորալնի անձնատիրոսն ապացոյցն էր, իր արժանիքին եւ տառապանքներուն լսելի վկան. չէ՞ որ իր արժանքը թափելու յանձնուող եղած էր եւ վերքի նշանները կը հաստատէին թէ ան ազգին համար զոհուելու պատրաստ էր : Ինք զինարը անմիջապէս խցեալ, ծառայեցաւ, վերջիչեց անոր զոհողութիւնները, ու կրած վիշտերը, քիչեց թէ անոր հետ անձամբ կուռած էր հանդէպ թշնամիին, ուստի սիրաբ Թունդ եղած բարձրաձայն աղաղակեց «Յեմ կրնար անոր հակառակ քու տալ, իր կրած վերքը չէի յիշեր եւ սպին մուցած էի» :

Մենք շատերս ալ կը մտնանք սպաները : Կը մտնանք փաշերէն յոշոտուած ճակատէն վազող արիւնք, քրտիները : Կը մտնանք խոցուած կողը ու անգամ նիզակին խնամ թանկագին արիւնք : Մ. Բ. ցած ենք գամբով ծակովուած ձեռներն ու ոտքերը ու ցտատանք մարմնոյն բնական տակ ճկուած ու պատառու մկանները : Կը մտնանք թէ ան վերքերը իւրաքանչիւր ծախու առնուած եւ փրկուած հոգիի վրայ ի՞նչ իրաւասութիւն ունին : Կը մտնանք մանչ շրթներէն մեզի ուղղուած մեղանշ պաշտամբերը որ կը ձայնէ «կ'աղաչեմ ձեզի Աստուծոյ ողորմութիւնով որ ձեր մարմինները ընծայէք կենդանի զոհ մը» :

Երբ մենք ստանք կը մտնանք Աստուած ալ կը թոյլատրէ որ վիշտն ու տառապանքը գան իրենց կրթիչ ու ուղղիչ դերը խաղալու :

Անկախից բռնակամը կը դիտենք մեր սիրելիներուն անշնչացած մարմինները, եւ այն ան ատեն կեանքը նոր հանգիստու որ արուածն շրջան մը կը սկսի : Ինք զինքնիս գիրքէ եւ պատիւէ զրկուած տեսնելով կ'արեւմտանք, որպէսզի Բրիտանոսով եղած հարստութիւնը լաւաւ յիշուի սեպերը : Երբեմն ինքզինքնիս ծախող ծրագիրներ, եւ անկատար յոյսերու առջեւ կը գտնենք, որպէսզի մեզ կուրցնող վարագոյրը վերցուի մեր աչքերէն տեսնելու : Աստուծոյ կամքը, Անոր օրհնեալ ծառայութիւնը եւ իր շափողներուն մէջ քաղելու տեսական վաշկը :

Աստուած կը Թողու որ մենք փշտա ծորերէն անցնենք, որպէսզի մարմնի բաները, որոնք զմեզ իրմէն կը հեռացնեն եւ մղուին, եւ Բրիտանոս ըլլայ նախապատիւ ամէն բանի մէջ, նաեւ մեր մէջ ոչ ոք եւ կեանքի կեդրոնը :

Ահա ինչ որ տառապանքը եղած է ձեզ մեղաւորներու համար եւ երբեք չպիտի ուզէիք զանոնք յիշուի կուռ չէի եթէ նոյնիսկ կարելի ըլլար ընել :

Տառապանքի միջոցաւ

ԱՍՏՈՒԱԾՈՅԻՆ ԿԵԱՆՔԸ ԿԸ ՀԱՍԿՆԱՆԻ

Հարստի մէջ գարնան եղանակին մայրի անտառնեւ, բուն գետինը, անպէտ եւ աւերաբ թոյսերով ծածկուած կ'ըլլայ : Մայրի տաւարները, կաղնիի տերեւներ, ցիրուցան, չոր մացառներ ու ճիւղեր աստ անդ, Թափուած են ու հողը կը խափանեն : Գարնանային նոր կեանքով հողը կը սկսի թոյսեր արտաբերել, սակայն չկրնար ծիւլ

քանի որ անպատու Թուփեր եւ անարժէք խոտեր կը խեղդեն մատաղ սաղմերը :

Ասոր վրայ երկրագործը տարօրինակ եւ անբնական գործողութիւն մը կը կատարէ : Կրակի կուռայ գետնի բոլոր անշնչ խոտերն ու Թուփերը : Ճարճատուն բոցերը շուտով կը լափեն բոլոր անտառը, բայց երկրագործին աջալարջ հսկողութեան ներքեւ յաղթ կաղնիները եւ վսեմ մայրիները անվնաս կը մնան, անտառին յատակը խանձուածներու, կոյտ մը կը դառնայ, յետոյ կ'անմրկէ եւ մոգական փոփոխութիւն մը տեղի կ'ունենայ : Անպէտ նիւթերու հեղձուցիչ պատանքէն ազատուած միլիոնաւոր սաղմեր ի լոյս կը պոռթկան ու բոլոր անտառը կը ծածկուի Թարմ ու կանանց ընծիւղներով :

Բուսեղէն բիւրաւոր ցողուններ իրենց մեծութեան եւ ապակիւնութեան գերեզմաններէն դուրս ելած են, վանդի մաքրող հրդեհը սատարած է իրենց վերակենդանութեան :

Իրր հաւատացեալ քու հեանքդ ալ ասոր չմանի՛ր :

Անարժէք նիւթերով եւ մարմնաւոր բաներով բռնադատուած է նա : «Աշխարհիս զբաղմունքը, եւ հարստութեան խաբէութիւնը խօսքը կը խեղդեն» կ'ըսէ մեր Տէրը : Ասոնց տակ Թաղուած կայ Բրիտանոսի կեանքը որ կը ճգնի, կը տագնապի խօսելու, յայտնուելու եւ պոռուկ քերելու համար, բայց աշխարհային ցանկութիւնները, ետափրութեան շարժառիւթներ, երկրորդական ծրագիրներ եւնի հանդէպ ներող գտնուելով՝ քսանական մը մարմնական թշնամիներ կը յարձակին ու կը խեղդեն ներքին Բրիտանոսի կեանքը : Այսպէս Բրիտանոսի մեր մէջ ձեռակերպիլը կ'արգելեն, որը Աստուծոյ մեզի համար ունեցած միակ եւ մեծագոյն նպատակն է :

Ուստի Աստուած կը Թողու որ մաքրութեան եւ սրբացման համար «մարմնին ու արիւնին» վրայ սրբագրիչ գործողութիւններ կատարուին սուգի, վշտի, նիւթական վնասներու միջոցաւ, ու երբ այս դէպքերը իրենց լրիւ պաշտման կատարին կեանքը ձեզի տխուր եւ մուռլ պատկեր մը կ'երևի : Այս բոլորը մեր օգտին համար կուգան մեզի «Որպէսզի իր արուածն հարստ ըլլանք» : Ու այն ալի տեսած ու խանձուած աւերակներէն կը ծինուի մարմնագ, ծաղիկ եւ անմահութեան կեանքի մը գեղեցկութիւնները : «Հոգիներու հորը հնազանդած ենք եւ սխալ ապրինք», երբ ԺԻ. 9 : Վանդի հիմա կ'ապրինք Անոր համար, որ մեզ սիրեց եւ երկինքը մեզի համար տուաւ :

ԿՈՐՈՒՍԵԱԼ ՎԵՇՏԵՐ

Անգամ մը մարդ մը կորսուած վիշտերու վրայ կը խօսէր. սկիւրէն չի հասկցայ թէ ի՞նչ բնիկ կ'ուզէր, բայց մի քիչ խորհելէ յետոյ նպատակը հասկցայ :

Կորուսեալ վիշտը այն վիշտն է, որուն մէջ կենտրոնացած են ինքնութեան միջոցին չի յաջողիր ձեռք բերել այն օրհնութիւնը զոր Աստուած ծրագրած էր իրեն տալու : Աստուած կ'ակնկալէ որ տառապանքները մարդոց հնազանդութիւն տրվեցնեն եւ հոգիներ իր սիրազեղ սրտին մտնեցնելու հասցնեն : Նաեւ կ'ուզէ որ աշխարհային ծանծաղ առանքներու տեղ, յաւիտենական օրհնեալ ջոյքերու խորանկութիւնը պարգէ : Ան կը փափաքի որ վիշտերու պատճառաւ Բրիտանոսի աննախընծայ նուիրում

տեղի ունենայ, եւ որ մարդիկ անցաւոր բաներէ հրաժարելով յաւիտենականութեան վրայ հաստատ իմ գնին :

Արդ, այն մարդը՝ որ վիշտերու միջոցաւ ծախողեցաւ այս օրհնութիւնները վայելելու եւ թողարկեց որ տառապանքը իր կեանքը դառնացնէ, հաւատքը սպաննէ եւ Աստուծոյ նուիրումը ստուցնէ, անախտին անձնասիրարար իր վիշտը կը սգայ եւ անտարբեր կը կենայ, մինչ իրեն կարօտ եղողները կը մեռնին անազնական, ահա այն մարդը բոլորովին ծախողած է : Աստուծոյ իրեն համար սահմանած վշտին կրթիչ դերէն ջոգատուելով՝ տառապանքը իրեն համար կ'որոշուեալ վիշտ մը դարձած կ'ըլլայ :

Սա ճշմարիտ է թէ կորուսած վիշտը ամենէն հաճախեալոր վկայութիւնն է քեզի դէմ : Լռիկ վկայութիւն մը թէ Աստուծոյ քեզ իրեն մօտեցնելու համար գործածած օրտագրաւ միջոցը ապարդիւն եղած է քու մերժումովդ եւ դառնանալովդ : Ձախողած է վիշտերու միջոցաւ քու կեանքդ օրհնելու խորունկ ծրագիրը :

Ո՛հ, այսօր մեզմէ քանիներ կ'ողբան փճացած շահա գործումներու, հարստութիւնով լեցուն նաւերու կորուստին համար, կը սգան նաեւ այն բեկեալ յայտերուն վրայ, որոնք հաստատ իրականութիւն եւ պտուղ չունեցան : Բայց արդեօք կ'ողբա՞ք կորուսեալ վիշտերու համար, որոնք անցան գացին առանց հոգին սրբացնելու, այս եղաւ այն պատճառաւ միայն որովհետեւ մեր սրտերը դառնացան եւ կարծրացան :

Վշտերուդ պատճառաւ Աստուծոյ դէմ մի դառնանար բարեկամս : Անոր սիրալիր վարմունքին դէմ ճակատ արդիւն նման մի կարծրացներ : Մի արգիլեր աստուածային ձեռաց այս խորհրդաւոր գործիքը, որ Քրիստոսի պատկերին ամենամուրաբ գիծերը պիտի յօրինէ, քու խուսափող հոգիիդ մէջ :

Մեզմէ շատերը գիտեն սա ականքին իրողութիւնը թէ, «ճառապանքը կամ զմեզ Աստուծոյ կը մօտեցնէ կամ կը հեռացնէ Անկէ : Երկրկյան գործիք մը որ կը գեղեցկացնէ կամ կ'եղծէ :

Մեր դիմադրութիւնովը զայն փոթորկալից հովի մը կը վերածենք որ կրնայ մեր կեանքի մեծեւ նաւակը իր ապահովութեան ծոցէն խլել ու հեռունները քշել : Իսկ մեր հնազանդութիւնովը Աստուած այն հովերը պիտի գործածէ մեր նախն յառաջացման իրրեւ մղից ոյժ դէպի իր կտուարեալ կաճքին ապահով ու հանդարտ նաւահան գիտար :

Զ. Բ. ՊՈՒՏԱԿԵԱՆ

Ազատ Թարգ.

Ո՞Վ Է ԱՂՔԱՏ

1. Անոնք աղքատ են որոնք Աստուծոյ դէմ կը դուրսդանան : Այնպիսիները կ'ըսեն Աստուծոյ «Քաշուէ մեզմէ ինչու որ Քու ճամբաներդ զիտնալ չենք ուզեր : Ամենակարողը ո՞վ է որ

անոր ծառայենք. . . » : Յոր. ԻԱ. 15-16 : Ամէն բարեաց աղբիւրը երբ կ'անարգեն, ինչո՞վ կրնան հարստանալ : Ասոնց համար արգահատելու եւ աղօթելու ենք :

2. Աստուած ուրաջ ողն երբ. «Անզգայ մը իր սրտին մէջ ըսաւ թէ Աստուած չկայ. Արդի՞նքը. Աստուած ալ զանոնք մերժեց : Սաղմ. 53 : 1-6 : Ուստի արցունքով աղօթելու ենք, որ անոնք Փրկչին ակնարկին հանդիպին, Պետրոսին նման :

3. Աստուած ուրաջ ողն երբ. «Ինչու որ Աստուծոյ խօսքերուն հակառակ կեցան եւ Բարձրելոյն խորհուրդը անարգեցին, ուստի Անիկա ալ նեղութիւններով խոնարհեցուց անոնց սիրտը, ինկան եւ օգնական մը չկար» : Սաղմ. 107 : 11-12 : Անոնց համար Տէրոջը ողորմութիւնը խնդրելու ենք, որպէս զի անոնց հասկըցնէ թէ խթանի դէմ կից զարնել դժուար բան է :

4. Կեղծաւորն երբ. «Քանզի կեղծաւորին յոյսը ի՞նչ է, թէ եւ հարստութիւն ալ զիգած ըլլայ. . . Յոր. ԻԷ. 8. Քանզի ի՞նչ կը շահի մարդ մը թէ որ բոլոր աշխարհը վաստկի. . . » : Սատթ. ԺԶ. 26 : Տէրոջը տանինք զանոնք :

5. Շողոքորթն երբ. «Ով որ իր բարեկամները կողոպտելու համար կը մատնէ կամ շողոքորթութիւն կ'ընէ, անոր տղոցը աչքերը պիտի նուաղին : Յոր. ԺԷ. 5 : Աղօթենք որ անոնք հասկնան թէ շողոքորթ չըթուանք Տէրոջը առջեւ պիղծ է :

6. Տրտնջողն երբ. «Անոնք արանջողներ ու քրթմնջողներ են, որոնք իրենց ցանկութիւններուն համեմատ կ'երթան եւ իրենց բերանները ամբարառաւան խօսքեր կը գրուցեն եւ շահի համար երեսպաշտութիւն կ'ընեն» : Յուդա 16 :

7. Դադլ Քրիստոսն եւան երբ. «Ուստի դուն որ զաղջ ես ու ոչ տաք, ոչ ալ պաղ քեզ բերնեւ դուրս փսխելու վրայ եմ : Քանզի կ'ըսես ես հարուստ եմ ու մեծցայ ու բանի մը կարօտ չեմ. ու չես զիտեր որ դուն խեղճ ու թշուառական ես. . . Ես քեզի խորհուրդը կուտամ. . . ոսկի ծախու առ եւ աչքերդ դեղ զիր : Յայտ. Գ. 16-18 :

Երեւելի Աստուածաբան մը ուղեց իմանալ թէ աշխարհիս վրայ ամէնէն թշուառ եւ ողորմելի մարդը ո՞վ է : Երկար մտածելէն յետոյ խնդրեց Աստուծմէ որ իրեն յայտնէ : Ձմեռուան առաւօտ մը եկեղեցի գնաց, որուն զրան քով տեսաւ խեղճուկ մարդ մը ցնցոտիներու մէջ ու բռնաւոր, որ սաստիկ ցուրտէն կը զոզողար : Աստուածաբանը այս աղքատը անանկ սոսկալի վիճակին մէջ

տեսնելով, կը խորհէր թէ Կոստանտնուպոլսէն անձը, զոր ինք կը փնտռէր։ Ուստի աղքատի մօտենալով բարեկեց. գայն «Թշուառ» կոչելով՝ Աղքատը Աստուածաբանին երեսին նայեցաւ եւ քսաւ. «Ես թշուառ չեմ»։ Մարդը զարմանքով ըսաւ. «Եթէ դո՛ւն թշուառ չեա՛ս հապա ո՞վ է, ի՞նչպէս մարդ ես որ քու վիճակէդ լուր չունիս»։ Աղքատը խոնարհաբար պատահականեց անոր. «Ես թագաւոր եմ»։ Դուն թագաւոր ես, քու թագաւորութիւնդ ո՞ւր տեղ է։ Աղքատը պատահականեց թէ «Իմ թագաւորութիւնս հոգւոյս մէջն է»։

Աստուածաբանը զարմացած չկրցաւ ուրիշ բան հարցնել այդ մասին, ուստի ուրիշ հարցում մը եւս քրաւ, թէ որ Աստուած վճռէ որ դուն դժոխք երթաս, չե՞ս թշուառանար։

— Ամենեւին, վասնզի ես Աստուածաշատութեան օրէնքով իմ Ստեղծիչս երկու ձեռքովս բռնած եմ, եթէ Ան զիս դժոխք զրկէ, Իրմէ բաժնուած չեմ ըլլար, Իրմով դժոխքն ալ երկինք կ'ըլլայ։ «Ես ալ իմ հոգւոյս թագաւորութիւնը գտնելով ոչ թէ թշուառ, այլ երջանիկ եւ երանելի եմ»։

Աստուածաբանը աղքատին ստքն իյնալով գոչեց, «Դուն թագաւոր ես քու պաշտած Փրկչովդ»։

Աշխարհի մէջ թշուառն այն է, որ չունի Փրկիչ եւ Տէր, չունի յաւիտեանական կեանք. «Եւ մեզ մեր Աստուծոյն թագաւորներ ու քահանաներ ըրիր, ու երկրի վրայ պիտի թագաւորենք»։ Յայտ, Ե. 10։

Ով մարդ, դուն նոր սիրտ ստացա՞ր,
Եղա՞ր Սրբոյ Հոգւոյն տաճար,
Սիրէ՞ զԱստուած քու եւ զընկեր,
Ուրախութեան երգէ երգեր,
Քանզի երկնից երանութիւնն
Է հաստատուն եւ մնայուն։

ՄԱՐԻԱՄ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐ

ՍՐ. ԳԻՐԲԸ ԱՄԵՆԱՅԻՏԱԿԱՐ ԿԵՐՊՈՎ

ՍԵՐՏԵԼՈՒ

.....
